



**UNDEF**

The United Nations  
Democracy Fund



**FNUD**

Fonds des Nations Unies  
pour la démocratie

## Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գործող սակագների ազդեցության գնահատումը խոցելի և մարգինալացված խմբերի վրա



## Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	3
Ներածություն.....	4
ՄԱՍ I. Օրենսդրությունը և ինստիտուցիոնալ շրջանակները .....	11
Օրենսդրական դաշտ.....	11
Ինստիտուցիոնալ շրջանակները .....	27
ՄԱՍ II. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն .....	31
Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտների ներկա իրավիճակը .....	31
Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ.....	33
Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման սակագներ .....	34
Հավասարության խնդիրները խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտներում .....	37
Այլ երկրներում կիրառվող ջրի սակագների և սոցիալական քաղաքականության դեպքերի ուսումնասիրություն .....	44
Քաղաձ դասեր.....	50
Առաջարկություններ .....	52

## Հապավումների ցանկ

ԱԿԶ	Ազգային կամավոր զեկույց
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԲՄՔՖ	ՄԱԿ-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորում
ԽՍՀՄ	Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն
ԿԶՆ-ներ	Կայուն զարգացման նպատակներ
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀԱԱՇՄ	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ	ՀՀ դրամ
ՄԱԺՀ	ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամ
ՄԱԿ-ի ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

## Ներածություն

«Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գործող սակագների ազդեցության գնահատումը խոցելի և մարզինալացված խմբերի վրա» տեխնիկական զեկույցը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից՝ ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի (ՄԱԺՀ) ֆինանսավորմամբ իրականացվող «Կանանց հնարավորությունների ընձեռում՝ Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարման գործընթացին մասնակցության համար» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը նպատակ ունի նպաստել Արարատյան դաշտավայրում բնական ջրային պաշարների կայուն կառավարմանն՝ ընդլանելով կանանց խմբերի մասնակցությունը համայնքի ջրային պաշարների վերահսկման գործընթացին՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն ապահովելու համար: Դրան հասնելու համար, պետք է ձեռնարկվի միմյանց հետ փոխկապակցված երեք գործողություն՝ ազգային մակարդակով սակագների փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ քննարկումներ՝ խոցելի և մարզինալացված խմբերի համար խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար, մարզային մակարդակով մշտադիտարկման վրա հիմնված մասնակցություն ոռոգման ջրի վերահսկմանը և համայնքային մակարդակում չորս փորձնական նախագծերի իրականացում: Փորձնական ծրագրերը թույլ կտան բացահայտել որոշումների կայացման գործընթացում համայնքահեն մասնակցային մոտեցումները՝ ներգրավելով կանանց՝ ջրային պաշարների հասանելիությունն ու կառավարումը բարելավելու համար:

Զեկույցի հիմնական նպատակն է բացահայտել խոցելի և մարզինալացված խմբերի ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության և մատչելիության հարցում առկա ֆինանսական խնդիրներն ու բացթողումները:

Սույն տեխնիկական զեկույցում ներառված է առկա իրավական շրջանակների, երկրի ինստիտուցիոնալ կարգավորումների և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) խմելու ջրի և ջրահեռացման իրավիճակի վերլուծությունը, գործող սակագնային քաղաքականությունը և փորձագիտական գնահատականը: Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման նպատակով, Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ-ի ԵՏՀ) / Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) եվրոպական տարածաշրջանային գրասենյակի և Ֆրանսիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում ՀՀ-ում 2015-2016 թվականներին իրականացվել է «Հավասար հասանելիության գնահատում ինքնագնահատման քարտի միջոցով» ծրագիրը: Ծրագիրն իրականացրել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային

տնտեսության պետական կոմիտեի<sup>1</sup> (ներկայումս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե) համակարգմամբ:

Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակի ինքնագնահատման նպատակային խնդիրները հետևյալն էին՝ հասնել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակի և դրա հետ կապված մարտահրավերների ավելի լավ պատկերացման՝ դյուրացնելու համար խնդիրների բացահայտումն ու դրանց առաջնահերթության որոշումը, որոնք պետք է հաշվի առնվեին արձանագրության շրջանակում թիրախները սահմանելիս, բացահայտել համապատասխան շահագրգիռ կողմերին և ստեղծել կապեր նրանց հետ, բարձրացնել հավասարության հարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկությունը, մշակել խնդիրների լուծման առկա քաղաքականության միջոցառումների համապարփակ գնահատական:

Ծրագրի շրջանակում Ինքնագնահատման քարտի միջոցով իրականացվել է Հայաստանում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակի գնահատում:

Ինքնագնահատման քարտը վերլուծական գործիք է, որը հնարավորություն է տալիս գնահատել Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիությունն՝ առկա ելակետային ցուցանիշներով հանդերձ՝, ներառյալ օրենսդրական, ֆինանսական և շահագրգիռ կողմերի շրջանակները: :

«Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործողությունների պլանի մշակում» ծրագրի շրջանակում՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման նպատակով, մշակվել է 2018-2020 թվականների գործողությունների պլան, որը ներառում է խոցելի և մարզինալացված խմբերի համար գործող սակագների ազդեցության գնահատումը և սակագների փոխհատուցման մեխանիզմների մշակումը:

Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների հասանելիության ապահովումը ենթադրում է ինչպես համակարգված, այնպես էլ անհատական մոտեցման կիրառում:

Գործողությունների պլանը հաստատվել է 2017թ.-ի օգոստոսի 4-ին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (ներկայումս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե) նախագահի թիվ 130-Ս հրամանով:

---

<sup>1</sup> Գերատեսչությունների կառավարման կառուցվածքը փոխվել է Հայաստանի Հանրապետության 2019 թվականի մայիսի 8-ի «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով: Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեն տեղափոխվել և վերանվանվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

Գործողությունների պլանը ներառում է հավասար հասանելիության ինքնագնահատման քարտի արդյունքում բացահայտված խնդիրների երեք հիմնական բաժին՝

- ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման կառավարում, այդ թվում ֆինանսավորում և օրենսդրական կարգավորում,
- ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման հարցում աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատում,
- ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար:

**Նպատակը.** Վերանայել սակագների փոխհատուցման ներկայիս մեխանիզմը՝ խոցելի և մեկուսացված խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար, ինչպես նշված է «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության գործողությունների ծրագրի III բաժնում՝ բարելավելու համար գործող սակագնային մեխանիզմը՝ բնակչության խոցելի խմբերին, մասնավորապես՝ կանանց պաշտպանելու նպատակով:

**Մեթոդաբանությունը.** Զեկույցը հիմնված է գրախոսությունների և առկա փաստաթղթերի ու բաց աղբյուրների գնահատման վրա, ինչպիսիք են վերկայքերը, վիճակագրությունը, զեկույցները և այլն:

Ջրային ոլորտում փորձ և գիտելիքներ ունեցող ազգային խորհրդատուները հավաքագրել են անհրաժեշտ տեղեկատվությունը և ստեղծել ելակետային վերլուծության նախագիծը:

**Խոցելի և մեկուսացված խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության** և ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի մի շարք այլ խնդիրների քննարկմանն էր նվիրված սույն թվականի հունվարի 30-ին, «Իբիս Երևան Կենտրոն» հյուրանոցում «Երևան» սրահում տեղի ունեցած հանդիպումը, որը կազմակերպվել էր «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախաձեռնությամբ՝ ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Կանանց հնարավորությունների ընձեռում՝ Հայաստանում ջրային պաշարների կայուն կառավարման գործընթացին մասնակցության համար» ծրագրի շրջանակում:

Հանդիպմանը ներկա էր 23 մասնակից (19 կին, 4 տղամարդ), որոնք ներկայացնում էին հիմնական ազգային շահագրգիռ կողմերին, ինչպիսիք են՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Արարատի մարզի համայնքապետարանները, ՀԿ-ները և անկախ փորձագետները: Արմավիրի մարզի բնակավայրերի ղեկավարները հանդիպմանը ներկա չէին, քանի որ այդ օրը նրանք հրավիրված էին մասնակցելու մարզային մակարդակով կազմակերպված անհետաձգելի հանդիպմանը:

Ելույթների ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի Հանրապետությունում գործող սակագնային քաղաքականությանը, խմելու ջրի, ջրահեռացման և ոռոգման ջրի սակագների ձևավորման գործընթացին, խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական աջակցությանը և այլ հարցերին:

Սակագնային քաղաքականության մասին խոսելիս, մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց այն հանգամանքին, որ միասնական սակագինը կիրառվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ընդգրկված բնակավայրերի բոլոր սպառողների, ներառյալ խոցելի և մարզինալացված խմբերի համար: Մինչդեռ, հիշյալ ընկերության սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերի մասով չկա լիարժեք տեղեկատվություն ջրի սակագնի վերաբերյալ, քանի որ այս բնակավայրերում ընդհանուր խնդիր է նույնիսկ ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության ապահովումը: Բացի այդ, ներկա դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն խոցելի և մեկուսացված խմբերը:

Խոսվեց նաև այն մասին, որ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել կատարել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես ՀՀ ջրային օրենսգրքում, որտեղ նախաձեռնվում է նաև ներառել խոցելի և մարզինալացված խմբերի սահմանումը և այդ խմբերի համար խմելու ջրամատակարարման հավասար հասանելիության ապահովումը:

Հանդիպման ավարտին, մասնակիցները ներկայացրեցին մի շարք առաջարկություններ՝ խոցելի խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման իրավունքների իրացումն ապահովելու համար:

Հանդիպման օրակարգը և լուսանկարները ներառված են սույն զեկույցի համապատասխանաբար հավելվածներ 1-ում և 2-ում:

### *Երկրի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն*

Հայաստանն ունիտար կառուցվածքով, բազմակուսակցական համակարգով ժողովրդավարական ազգային պետություն է: Ժամանակակից Հայաստանը զբաղեցնում է 29 743 կմ<sup>2</sup> տարածք, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ բնակչության թիվը կազմում էր 2 972 700 մարդ: Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը կազմում էր 3872 դոլար: Աղքատության շեմից ցածր կենսամակարդակ ունեցող բնակչությունը կազմում էր 27,1%, իսկ գործազուրկները՝

17,8%: Քաղաքային բնակավայրերում ապրող բնակչությունը կազմում էր 63,8%, իսկ գյուղական բնակչությունը՝ 36,2% ([www.armstat.am](http://www.armstat.am)):

Վարչատարածքային բաժանում (մարզեր և Երևան քաղաք)<sup>2</sup>



### Վերականգնվող ջրային պաշարներ


Վերականգնվող ջրային պաշարները (ներքին գետային հոսքերը և անձրևներից գոյացած ստորերկրյա ջրերը) տարեցտարի մեծապես տարբերվում են: Քաղցրահամ ջրերի վերականգնվող պաշարները 2017թ.-ին կազմել են 4.6632 մլն խոր.մ ([www.armstat.am](http://www.armstat.am)):

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե՝ <https://www.armstat.am/file/doc/99510733.pdf>




Միջինում (2000թ.-ից մինչև 2017թ.-ը) վերականգնվող քաղցրահամ ջրերի պաշարները տարեկան կազմել են շուրջ 6.670 մլն մ<sup>3</sup>: Հայաստանի ընդհանուր բնակչությունը 2000թ.-ից նվազել է 3 226 միլիոնից՝ 2017 թվականին հասնելով 2 986 միլիոնի (ԱՐՄՍՍՏՍԲԱՆԿ, ArmStatBank.am, 2019թ.): Նույն ժամանակահատվածում քաղցրահամ ջրի ընդհանուր ջրառը աճել է 32%-ով: Միջին հաշվով ջրառի 29,6%-ը կորչում է ջրամատակարարման կենտրոնացված համակարգի ներսում՝ տեղափոխման ընթացքում: Կենտրոնացված ջրամատակարարումը կազմում է ընդհանուր քաղցրահամ ջրերի ջրառի մոտ 61% -ը (ENI SEIS II East<sup>3</sup>):

Տարեկան տեղումների միջին քանակը և շեղումները 1961-1990թթ. նորմայի նկատմամբ<sup>3</sup>, մմ



<sup>3</sup> <https://www.armstat.am/am/?nid=81&id=2075>

Տեղումների միջին ամսական քանակը ՀՀ-ում, 2017թ., մմ<sup>4</sup>



<sup>4</sup> <https://www.armstat.am/am/?nid=81&id=2075>

## ՄԱՍ I. Օրենսդրությունը և ինստիտուցիոնալ շրջանակները

### Օրենսդրական դաշտ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջրային պաշարների արդյունավետ կառավարմանը, զարգացմանը և օգտագործմանը: Խմելու ջրի և ջրահեռացման ոլորտի կանոնակարգման նպատակով վերջին տարիներին երկրի օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունվել են բազմաթիվ օրենքներ, օրենսդրական ակտեր, որոշումներ և այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա իրականացվել են մի շարք բարեփոխումներ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին: ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն, մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Ըստ այդմ, վերը նշված իրավունքների մանրամասն իրականացման մեխանիզմները սահմանվում են օրենքներով:

### Ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերը

Իրավական ակտի տեսակը	Անվանումը	Ընդունման տարեթիվը	Մեկնաբանություն
Օրենսգիրք	Ջրային օրենսգիրքը	2002	Օրենսգիրքը ջրային ոլորտի հասկացությունները և հարաբերությունները սահմանող և կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթն է: Ջրային օրենսգիրքը կարգավորում է

			<p>ջրային ռեսուրսների և համակարգերի պահպանման, օգտագործման, բախշման հետ կապված խնդիրները, ինչպես նաև սահմանում է մասնավոր հատվածի ներգրավման սկզբունքներն ու ձևերը:</p>
Օրենք	<p>ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին</p>	1992	<p>Օրենքը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար: Ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառին վերաբերվող հիմնական պահանջները շարադրված են օրենքի 16-րդ հոդվածում:</p>
Օրենք	<p>Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին</p>	1998	<p>Սույն օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-</p>

			իրավական տեսակից, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:
Օրենք	Տեղեկատվության ազատության մասին	2003	Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները: Օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:
Օրենք	Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին	2005	Օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման հայեցակարգ է: Սույն օրենքի նպատակն է ներկայում և ապագայում մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսա-էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի և որակի ջրային ռեսուրսների

			մատչելիության ապահովումը:
Օրենք	Ջրի ազգային ծրագրի մասին	2006	<p>Օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հեռանկարային զարգացման հիմնական փաստաթուղթն է, որով իրականացվում են ջրային օրենսգրքով սահմանված խնդիրները: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները: Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները ելնում են ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից: Օրենքի նպատակն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բնակչության և տնտեսության պահանջների բավարարման,</p>

			<p>շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ռազմավարական ջրային պաշարի կազմավորման և օգտագործման, ազգային ջրային պաշարի պահպանության, ՀՀ ջրային օրենսգրքի և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների սահմանում:</p>
Օրենք	<p>ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</p>	2018	<p>Օրենքի համաձայն, համապարփակ կերպով կարգավորվում են ջրահեռացման իրավահարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են կեղտաջրերի և ջրահեռացման համակարգերի տեսակները և ըստ տեսակների՝ կեղտաջրերի հեռացմանը, մաքրմանը և մոնիտորինգին ներկայացվող պահանջները: Օրենքն ուժի մեջ է մտնելու 2020 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ, անցումային դրույթներում ամրագրված միջոցառումների ժամկետները համապատասխանեցվել են կայուն զարգացման նպատակների ժամկետներին:</p>
Կառավարության որոշում	<p>Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին</p>	2002	<p>Որոշման համաձայն, սանիտարական պահպանման գոտիների օգտագործման սանիտարական սահմանափակումների և նորմերի սահմանման պետական լիազորված մարմին</p>

			է հանդիսանում առողջապահության նախարարությունը:
Կառավարության որոշում	Զրոգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին	2003	Այս որոշմամբ կոմունալ- կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում պարտադիր պահանջվում է համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահական տեսչական մարմնի կողմից:
Կառավարության որոշում	Ազատ ջրօգտագործման կարգը հաստատելու մասին	2003	1. Սույն կարգով կանոնակարգվում են ազատ ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունները, բացառությամբ, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների, անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի, հակահրդեհային նպատակներով ազատջրօգտա գործման, որոնք կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած առանձին կարգերով: 6. Բնապահպանության նախարարությունը, հիմք ընդունելով մարդկանց առողջության համար ջրային ռեսուրսի վտանգավորության



			<p>մասին առողջապահության բնագավառում լիազոր մարմնի ներկայացրած տեղեկատվությունը, կարող է սահմանափակել կամ կասեցնել ազատ ջրօգտագործումը՝ ըստ ջրային ռեսուրսի (ռեսուրսների) կամ դրա (դրանց) մասի (մասերի), եթե՝ ա) տվյալ տարածաշրջանում հայտնաբերվել են համաճարակի դեպքեր, և առկա է ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման վտանգ. բ) ջրային ռեսուրսն աղտոտված է այն չափով, որ կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը:</p>
Կառավարության որոշում	Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին	2003	<p>Սույն կանոններում ամրագրված դրույթները տարածվում են ջրահեռացման համակարգերը սեփականության կամ օգտագործման իրավունքով օգտագործող (շահագործող) և տնօրինող կազմակերպությունների վրա: Ջրահեռացման համակարգերը կարող են օգտագործվել (շահագործվել) դրանց սեփականատերերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով օգտագործման (շահագործման) իրավունք ձեռք բերած կազմակերպությունների կողմից:</p>
Կառավարությ	Ջրային ռեսուրսների	2005	Այս որոշմամբ հաստատվել է

ան որոշում	օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին		ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգը, հրահանգները, բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակները, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգը:
Կառավարության որոշում	Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին	2005	Այս որոշմամբ սահմանվում են խմելու-տնտեսական և կուլտուր-կենցաղային (մարդկանց կարիքները բավարարելու), ոռոգման, արդյունաբերական նպատակներով օգտագործվող անհրաժեշտ ջրի որակի սահմանման ստանդարտները, ինչպես նաև մակերևութային ջրային ռեսուրս թափվող կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքերի չափանիշների որոշման կանոնակարգերը:
Կառավարության որոշում	ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր	2014	Ծրագրով նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնելու համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավելու

			<p>         ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրը:       </p> <p>         Ջրահեռացման բնագավառում կարևորվում է նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի կոյուղացման համակարգի վերակառուցումը և հեռացվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը:       </p> <p>         Սակագնային քաղաքականությունը ծրագրի ժամանակահատվածում ուղղված կլինի սակագների ծախսաձածկման մակարդակի աստիճանական բարձրացմանը՝ հաշվի առնելով ամենացածր եկամտային խմբի տնային տնտեսությունների համար մատչելիության հանգամանքը:       </p> <p>         Կսահմանվի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելի սակագնի առավելագույն շեմ, որից բարձր սակագնով ծառայությունների մատուցումը աղքատ ընտանիքների համար առաջացած տարբերության չափով կսուբսիդավորվի պետության կողմից:       </p>
Կառավարության որոշում	ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և խմելու	2017	<p>         Որոշմամբ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու նպատակով սահմանվում է       </p>

	<p>ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին</p>		<p>ապօրինի սպառման սահմանումը, արձանագրման և հեռացված (մաքրված) կեղտաջրերի օրական ջրաքանակների հաշվարկման կարգը:</p>
<p>Կառավարության արձանագրային որոշում</p>	<p>ՀՀ կառավարության 15.03.2018թ. N10 արձանագրության 13-րդ կետով հավանություն տրված՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին</p>	<p>2018</p>	<p>ՀՀ կառավարության սույն արձանագրային որոշմամբ հավանություն է տրվում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թվականների ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին, սահմանվում են ռազմավարության հիմնական նպատակը, ներկա խնդիրները, առաջարկվող լուծումները, ռիսկերը և ենթադրվող արդյունքները: Հիմնական նպատակն է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը սպասարկվող և չսպասարկվող բնակավայրերում, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտների բարելավումը, որը նախկինում չի դիտարկվել որպես առաջնային խնդիր:</p>

Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N2-III-U2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» հրաման	2002	Այս հրամանով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները:
Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-U2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» հրաման	2002	Այս հրամանով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու մասին	2016	Սույն որոշմամբ սահմանվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման՝ մատակարար-բնակիչ բաժանորդ և մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ պայմանագրերի օրինակելի ձևերը:
ՀՀ հանրային ծառայությունները	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման	2016	Սույն կանոններով սահմանվում են մատակարարի կողմից բաժանորդին խմելու

կարգավորող հանձնաժողովի որոշում	(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին		ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման , ինչպես նաև մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման հետ կապված մատակարարի և բաժանորդի, մատակարարի և դիմող անձի փոխհարաբերությունները:
---------------------------------	--	--	---

### Ակնարկ Հայաստանում տեղի ունեցող այլ գործընթացների մասին

ՄԱԿ-ի ԵՏՀ / ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանային գրասենյակի «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը հստակորեն կենտրոնանում է անվտանգ և կայուն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ապահովման (թիրախներ 6.1 և 6.2), ինչպես նաև մարդկանց և էկոհամակարգերի համար առողջ շրջակա միջավայրի ստեղծման վրա (թիրախ 6.6): Արձանագրությունն ուղղակիորեն առնչվում է ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերալ ԿԶՆ-ի բոլոր տեսանկյուններին, ներառյալ ջրի ամբողջ ցիկլին՝ աղբյուրից մինչև օգտագործում (թիրախներ 6.4 և 6.5) և կեղտաջրերի վերաօգտագործմանը (թիրախ 6.3):

2015թ.-ի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը ստորագրեց «Օրակարգ 2030»-ը և դրա կայուն զարգացման 17 նպատակները: 2016թ.-ի մայիսին կառավարությունը նախաձեռնեց ՀԶՆ-ների ամփոփ զեկույցը և պաշտոնապես սկսեց ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը՝ ստեղծելով նաև վերջինիս իրականացման համակարգը:

Հայաստանը 2015 թվականից ի վեր ստեղծել է ԿԶՆ-ների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք ներառում են Հայաստանի վարչապետին կից Կայուն զարգացման ազգային խորհուրդը, ԿԶՆ-ների ազգայնացման միջգերատեսչական աշխատանքային խումբը և ԿԶՆ նորարարության ազգային լաբորատորիան: ԿԶՆ նորարարության ազգային լաբորատորիան նորարարական հարթակ է, որտեղ կառավարությունը և ՄԱԿ-ը միավորվում են՝ երկրում ԿԶՆ-ների իրականացմանն աջակցելու համար: ՀՀ վիճակագրական կոմիտեն<sup>5</sup> մշակել է գլոբալ

<sup>5</sup>ՀՀ կառավարության 2018թ.-ի մայիսի 22-ի «Նախարարության ենթակա մարմինների ենթակայությունը սահմանելու մասին» N 580-Ս որոշմամբ փոխվել է բոլոր գերատեսչությունների կառուցվածքը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը վերանվանվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի:


մեթատվյալներ բոլոր ցուցանիշների վերաբերյալ, որոնք օգնում են գնահատել ԿԶՆ-ների վերաբերող ընթացիկ վիճակը:

2016թ.-ի մայիսին կառավարությունը սկսեց ԿԶՆ-ների ազգայնացման գործընթացը:

2017թ.-ի հունիսին կառավարությունը պատրաստեց իր միջնաժամկետ զարգացման ծրագիրը, որը սահմանեց ԿԶՆ-ների հետ արդյունավետ փոխգործակցությունը: Ավելին, Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնին հանձնարարվեց վերանայել և թարմացնել Հայաստանի զարգացման ռազմավարությունը՝ այն վերափոխելով մինչև 2030 թվականը երկարաժամկետ ռազմավարական զարգացման համակարգի՝ ներառելով ի հայտ եկող առաջնահերթություններն ու կարիքները, բազմակողմանի և նորարարական մոտեցումները՝ և՛ որպես տեսլական, և՛ որպես մեթոդաբանական գործիք: Հայաստանի 2014-2025թթ. զարգացման ռազմավարությունը սահմանում է բազմաթիվ տնտեսական և սոցիալական ոլորտներում ռազմավարական նպատակները, թիրախները և ցուցանիշները:

Ստորև գծապատկերում ներկայացվում է ԿԶՆ թիրախների առաջնահերթության մակարդակը: ԿԶՆ 6 –ը Հայաստանի համար հանդիսանում է գերակա ոլորտ:

*ԿԶՆ թիրախների առաջնահերթության մակարդակը*



Աղբյուրը՝ Հայաստանում ինտեգրված քաղաքականության արագ գնահատում

2018թ.-ի հուլիսին ՀՀ կառավարությունը ներկայացրեց առաջին ազգային կամավոր զեկույցը (ԱԿԶ)<sup>6</sup> ՄԱԿ-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումում (ԲՄԲՖ):

ԱԿԶ-ն ներկայացնում է Հայաստանի կողմից մինչ այժմ ձեռք բերված առաջընթացն ու փորձը 2030-ի օրակարգի և ԿԶՆ-ների ազգայնացման և իրականացման գործընթացում: ԱԿԶ-ում բարձրացվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես, գյուղական բնակավայրերում ջրահեռացման ծառայությունների մատչելիության ցածր մակարդակը, քաղաքային և գյուղական բնակչության միջև անվտանգ կառավարվող ջրահեռացման ծառայությունների անհավասար մատչելիությունը, ջրօգտագործման անարդյունավետությունը և դրա հետևանքով ջրի կորուստը, տվյալների բացակայությունը, հատկապես՝ այն համայնքներում, որտեղ ջրամատակարարումն ու ջրահեռացումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները և այլն:

<sup>6</sup> Ազգային կամավոր զեկույցը մատչելի է հետևյալ կայքում՝ [https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia\\_VNR\\_2018.pdf](https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf)



Անկասկած, գործընթացը հաստատում է միջսեկտորալ և լայնածավալ բնույթը, որն, ամենայն հավանականությամբ, կշարունակվի 2030-ից հետո, և կպահանջվի համաձայնեցված ջանքեր և հանձնառություններ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

2017թ.-ի նոյեմբերի 24-ին Հայաստանը և Եվրամիությունը պաշտոնապես ստորագրեցին «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»-ը, որն, ի թիվս այլոց, ներառում է պարտավորություններ Հայաստանի համար ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում իր օրենսդրության՝ հետևյալ հինգ դիրեկտիվների՝ Ջրի շրջանակային դիրեկտիվ, Հեղեղումների դիրեկտիվ, Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ, Խմելու ջրի դիրեկտիվ և Նիտրատների դիրեկտիվ, պահանջների մոտարկմանն ուղղված միջոցառումների մասով:

ԵՄ դիրեկտիվները	Հայաստանի Հանրապետության պարտավորությունները
Ջրի շրջանակային դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Ազգային օրենսդրության ընդունում</li> <li>• Գետավազանային տարածքների բնութագրիչների վերլուծություն</li> <li>• Ջրի որակի մշտադիտարկման ծրագրերի հիմնում</li> <li>• Գետավազանային կառավարման պլանների մշակում, խորհրդակցություններ հանրության հետ և պլանների հրատարակում</li> </ul>
Հեղեղումների դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Ազգային օրենսդրության ընդունում</li> <li>• Հեղեղումների ռիսկի նախնական գնահատման ձևակերպում</li> <li>• Հեղեղումների վտանգի քարտեզների և հեղեղումների ռիսկի քարտեզների պատրաստում</li> <li>• Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների ստեղծում</li> </ul>
Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման կարգավիճակի գնահատում</li> <li>• Ջգայուն տարածքների և</li> </ul>

	<p>ազլումերացիաների բացահայտում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների կատարման տեխնիկական և ներդրումային ծրագրի նախապատրաստում</li> </ul>
<p>Գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատների պատճառած աղտոտման դեմ ջրերի պաշտպանության մասին դիրեկտիվ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աղտոտված ջրերի կամ ռիսկի տակ գտնվող ջրերի հասկոբոշում և նիտրատով աղտոտման տեսակետից խոցելի գոտիների նշում</li> <li>• Նիտրատով աղտոտման տեսակետից խոցելի գոտիների համար լավագույն գյուղատնտեսական փորձի կողերի և գործողությունների ծրագրերում իրականացվելիք միջոցառումների սահմանում</li> <li>• Մշտադիտարկման ծրագրերի ստեղծում</li> </ul>
<p>Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակի մասին դիրեկտիվ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Խմելու ջրի ստանդարտների հաստատում</li> <li>• Մշտադիտարկման համակարգի ստեղծում</li> <li>• Սպառողների համար տեղեկատվության տրամադրման մեխանիզմի ստեղծում</li> <li>• Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման ճանապարհային քարտեզի մշակում</li> </ul>

Ներկայումս Հայաստանն **Արևելյան գործընկերության երկրների համար ԵՄՋՆ+ ծրագրի** թիրախային երկրներից մեկն է, որը նպատակ ունի աջակցել Հայաստանին ջրային ոլորտի բարեփոխումներում: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքմամբ, Հայաստանը համաձայնեց ներդաշնակեցնել ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրության հետ: Ներդաշնակեցման առաջին քայլն ազգային ջրային օրենսդրության վերլուծությունն է՝ ԵՄ հինգ դիրեկտիվների առումով: Այս գործողությանը ԵՄՋՆ+ ծրագրի

շրջանակում մասամբ աջակցում է ՄԱԿ-ի ԵՏՀ-ն՝ ազգային օրենսդրության ներդաշնակեցման համար ճանապարհային քարտեզի մշակման և ազգային օրենսդրությունում, օրինակ՝ ջրային օրենսգրքում փոփոխություններ առաջարկելու միջոցով:

## Ինստիտուցիոնալ շրջանակները

Ջրային պաշարների կառավարման ոլորտում հիմնական շահագրգիռ կողմերն են՝

- **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունն** օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) կառավարման բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:
- **Ջրային կոմիտեն** պատասխանատու է ջրամատակարարման և ջրահեռացման կազմակերպման, ջրային համակարգերի կառավարման և դրանց անվտանգ օգտագործման համար:
- **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը** պատասխանատու է սակագնային քաղաքականության համար:

Ջրային ոլորտում որոշակի դերակատարություն ունեցող այլ հաստատություններն են՝

**ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» (ՇՄՄՏԿ) ՊՈԱԿ-ի** գործունեության հիմնական առարկան և նպատակներից է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով: ՇՄՄՏԿ-ն օրենքով սահմանված կարգով իրականացնում է ջրերի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ներգործությունների, աղտոտիչ նյութերի տարածման ու դրանց հետևանքների դիտարկումներ, գնահատումներ և կանխատեսումներ:

**ՀՀ առողջապահության նախարարությունը** պատասխանատու է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման համար: Իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով նախարարությունը մշակում և

վերահսկում է սանիտարահամաճարակային կանոնակարգերի և ստանդարտների իրագործումը՝ այդ թվում, խմելու ջրի հատվածի համար: Այն նաև ստուգումների միջոցով վերահսկում է խմելու նպատակով օգտագործվող ջրի աղբյուրների որակը:

**ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ը պատասխանատու է հետևյալի համար. (i) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար ինտեգրված միջոցառումների իրականացում, (ii) վարակիչ և մակաբուծական հիվանդությունների աղբյուրների ախտազերծում, (iii) հանրային անվտանգության սպառնալիքների դեպքում բնակչության պատրաստվածության և արձագանքման կարողությունների ապահովում, (iv) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության դիտարկում, վերլուծություն և գնահատում, և (v) բնակչության առողջության վրա բնապահպանական գործոնների հասարակական-հիգիենիկ մշտադիտարկման իրականացում:

**ՀՀ ֆինանսների նախարարությունը** պատասխանատու է ոլորտին առնչվող բյուջետային և ֆինանսավարկային քաղաքականության համար:

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը** գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական զարգացման քաղաքականությունը:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը** մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, որի հիմնական նպատակներն են՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակումը, իրականացման համակարգումը, բնակչության տարահանման և պատսպարման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը, տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման ապահովումը, ՀՀ տարածքում միջազգային փրկարարական գործողություններ իրականացնող ուժերի համակարգումը, աղետների բժշկության համակարգի զարգացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը, հիդրոոդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը, պետական նյութական պահուստի պաշարների ձևավորումը, պահպանումն ու սպասարկումը և այլ նպատակներ:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության** հիմնական նպատակը հիդրոոդերևութաբանական գործունեության իրականացումն է, ինչպես նաև պետական նշանակության հիդրոոդերևութաբանական ծրագրերի իրականացումը, գետերի, լճերի և ջրամբարների հիդրոլոգիական ռեժիմի

տարածաժամանակային օրինաչափությունների ուսումնասիրումը, մակերևութային ջրերի պետական հաշվառումը:

**ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն** իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառում պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Այն մասնավորապես (i) ապահովում է բնակչության սանիտարական անվտանգությունը, (ii) իրականացնում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն, (iii) կազմակերպում է սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ և վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, այդ թվում ջրային աղբույրներից ծագող հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներ:

**ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը** վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

**Տեղական ինքնակառավարման մարմիններն** են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:

Կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցող մասնագիտացված ընկերությունը **«Վեոլիա Ջուր» ՓԲԸ**-ն է:

**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը** սահմանում է սակագնային քաղաքականությունը: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հիմնական իրավասություններն են՝

- ա) գործունեության լիցենզավորումը, լիցենզիայի պայմանների սահմանումը և դրանց վերահսկումը,
- բ) կարգավորող մարմնին հաշվետվություն ներկայացնելու նպատակով լիցենզիա ստացած անձանց համար հաշիվների, ենթահաշիվների ներդրումը՝ համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառման առնչվող օրենքների ու իրավական ակտերի,
- գ) կարգավորվող սակագների սահմանումը,
- դ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես

նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը,

ե) շուկայի կանոնների և կարգերի սահմանումը,

զ) կարգավորող մարմնի կողմից իր իրավասության սահմաններում իրավական ակտերի սահմանումը, կատարման վերահսկողությունը,

է) սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը,

ը) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով:

## ՄԱՍ II. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն


### Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտների ներկա իրավիճակը

Առկա, հասանելի, մատչելի և անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հասանելիությունը մարդու իրավունքներից է: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով ճանաչել է ջրի և ջրահեռացման նկատմամբ մարդու իրավունքը:

Հայաստանի խմելու ջրի շուրջ 96%-ը ստորերկրյա ջրեր են: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, սակայն հանրապետությունում կա մոտ 570 բնակավայր (ընդհանուր առմամբ 1000-ից ավելի բնակավայր), որոնք չեն սպասարկվում ջրամատակարարման և ջրահեռացման մասնագիտացված ընկերությունների կողմից: Ջրամատակարարումն ապահովվում է տեղական աղբյուրների միջոցով. ջրային համակարգերը շահագործվում են համայնքի կամ համայնքի բնակիչների միջոցով:

Ջրի կորուստը կազմում է 825.6 մլն. խոր.մ:

Ջրառն ու տրանզիտային կորուստները ջրմուղի ցանցում, 2013-2017թթ.<sup>7</sup>



<sup>7</sup> <https://www.armstat.am/am/?nid=81&id=2075>

Քաղաքներն ու հանրապետության որոշ խոշոր բնակավայրեր ունեն ջրահեռացման համակարգեր: Ընդհանուր առմամբ, գոյություն ունի 3700 կմ երկարությամբ ջրահեռացման ցանց, 350 կմ երկարությամբ մակերևութային ջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ, և 8 ջրահեռացման համակարգի պոմպակայան (տես՝ [www.veolia.am](http://www.veolia.am)): Ինչ վերաբերում է վերոհիշյալ 570 բնակավայրին, ապա կան բնակավայրեր, որտեղ կոյուղու ցանցն առկա է, սակայն գտնվում է անմխիթար վիճակում: Կան նաև անհատական լուծումներ՝ կեղտաջրերի հեռացման համար նախատեսված ջրանթափանց հորեր: Ադ հորերից կեղտաջրերի հեռացման ծառայությունը գրեթե բացակայում է: Բացի այդ, այդպիսի հորերը, ընդհանուր առմամբ, պատշաճ կերպով չեն կառուցված, այսինքն՝ ջրանթափանց չեն:

Աղտոտված կեղտաջրերի ծավալն (առանց մաքրման և ոչ բավարար մաքրված) ընդհանուր կեղտաջրերի նկատմամբ կազմել է 42.20 մլն խոր.մ:

***Հեռացված կեղտաջրերի ծավալն ըստ ջրավազանային կառավարման տարածքների, 2017թ., մլն խոր. մ<sup>3</sup>***

	Հեռացված կեղտաջրեր , ընդամենը	այդ թվում՝ ըստ որակի		
		աղտոտված (առանց մաքրման)	չափորոշային մաքուր (առանց մաքրման)	ոչ բավարար մաքրված
Ախուրյան	80.1	2.8	65.7	11.6
Արարատյան	11.7	3.4	7.8	0.5
Հարավային	60.0	4.7	9.1	46.2
Հյուսիսային	31.3	2.4	0.1	28.8
Հրազդան	363.7	48.4	236.3	79.0
Սևան	4.0	1.9	0.6	1.5
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>550.8</b>	<b>63.6</b>	<b>319.6</b>	<b>167.6</b>

Համաշխարհային ցուցանիշներն ընտրվել են ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից՝ ԿԶՆ թիրախ 6.1-ի (անվտանգ կերպով կառավարվող խմելու ջրի ծառայությունից օգտվող բնակչության տոկոսը) և 6.2-ի ((ա) անվտանգ կերպով

<sup>8</sup> <https://www.armstat.am/am/?nid=81&id=2075>



կառավարվող ջրահեռացման ծառայություններից օգտվող բնակչության տոկոսը) և (բ) ձեռքերը լվանալու (օձառով և ջրով) համար նախատեսված միջոցներից օգտվող բնակչության տոկոսը)) նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու համար: Այս առնչությամբ, անվտանգ կերպով կառավարվող խմելու ջրի մատակարարման ծառայություններից օգտվող բնակչությունը տոկոսը կազմել է 98,1% (2015թ.): Անվտանգ կերպով կառավարվող սանիտարահիգիենիկ ծառայություններից, այդ թվում՝ օձառով և ջրով ձեռքերը լվանալու համար նախատեսված միջոցներից օգտվող բնակչության մասնաբաժինը կազմել է 69,7% (2016թ.):

## **Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ**

2017 թվականի հունվարի 1-ից ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության 2016 թվականի նոյեմբերի 21-ին «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի ջրմուղ-կոյուղի», «Շիրակի ջրմուղ-կոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վերաբերյալ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի (Վարձատու) և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի (Վարձակալ) միջև կնքված վարձակալության պայմանագրի:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հիմնական նպատակները ներառում են հետևյալ հինգ ոլորտների արդյունավետ շահագործումը և պահպանումը՝

- ջրային աղբյուրներ և մաքրման կայաններ, փոխանցման գծեր,
- ջրամատակարարման բաշխման ցանցեր,
- կեղտաջրերի հավաքման համակարգեր,
- կեղտաջրերի մաքրման կայաններ,
- հաճախորդներին համապատասխան ծառայությունների մատուցում:

Վարձակալության պայմանագրի նպատակն է կատարելագործել հաճախորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետությունը, կենսունակությունը և որակը, ջրի և կեղտաջրերի համակարգերի, օբյեկտների և ենթակառուցվածքների կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) հետագա զարգացմանն ուղղված ՀՀ խմելու ջրի համակարգի բարեփոխումների շարունակությունը:

Պայմանագրի 2-րդ տարվա ընթացքում՝ Երևանում ջրամատակարարման միջին տևողությունը նախորդ 23,5 ժամից հասել է մինչև 23,6 ժամի: 2018 թվականին լույս տեսած նոր ջրամատակարարման ժամանակացույցով, մյուս քաղաքային և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման միջին տևողությունը համապատասխանաբար աճել է 7,5% -ով և 1,2% -ով:

<sup>9</sup> <https://www.armstat.am/am/?nid=655>

Ցուցիչ	Չափման միավոր	2017	2018	Տարբերություն
Ջրամատակարարման շարունակականություն (միջին տևողությունը)				
Երևան	%	97.9%	98.3%	0.4%
	ժամ	23.5	23.6	
Քաղաքային այլ վայրեր	%	67.9%	75.4%	7.5%
	ժամ	16.3	18.1	
Գյուղական վայրեր	%	68.8%	70.0%	1.2%
	ժամ	16.5	16.8	
Ջրի արտադրություն	մլն մ <sup>3</sup>	571.5	587.3	
Վաճառված ջուր	մլն մ <sup>3</sup>	119.1	122.0	
Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափի գրանցված ջրի սպառում)		Բազիսային տարի	80.2 %	
		81.24%		

Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը ջրի արտադրությունը կազմել է մոտ 519,405 մլն մ<sup>3</sup>, վաճառված ջուրը՝ 111.94 մլն մ<sup>3</sup>, իսկ չհաշվառվող ջուրը՝ 78,1%:

### Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման սակագներ

Ջրամատակարարման ծառայությունները համարվում են տնտեսապես մատչելի, եթե սպառողներն ի վիճակի են վճարել այդ ծառայությունների համար՝ առանց մյուս կենսականորեն կարևոր ծախսերի զգալի կրճատման:

Խմելու ջրամատակարարման ոլորտում ներառված են պետության՝ ի դեմս ՀՀ կառավարության և խմելու ջրամատակարարման ծառայություն մատուցողի՝ ի դեմս վարձակալի և բաժանորդի հարաբերությունները: Օրենսդրական առումով պետություն-ջրամատակարար-բաժանորդ շրջանակն ըստ իրավասությունների և պարտականությունների ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, Ջրամատակարարման և ջրահեռացման 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրում:

ՀՀ խմելու ջրի մատակարարման ոլորտի հիմնական խնդիրների լուծմանը նպաստող և արդյունավետ գործունեության հնարավորությունները բացահայտող հիմնական գործոններից է ճիշտ սակագնային քաղաքականության իրականացումը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանված կարգով և ժամկետներում սահմանում է մանրածախ ծառայությունների, մեծածախ ջրամատակարարման և մեծածախ ջրահեռացման ծառայությունների սակագները:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 397 Ա որոշմամբ հաստատվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՁ N° 0001 լիցենզիայի ժամկետները և պայմանները: Լիցենզիան գործում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը: 2018 թվականի հունվարի 1-ից (երկրորդ հաշվետու տարվա սկզբից) սակագները յուրաքանչյուր տարի հաշվարկվում են՝ ելնելով լիցենզիայի գործողության բոլոր 15 տարիների համար բերված բազիսային սակագներից և լիցենզիայով սահմանված ճշգրտման բանաձևերից: Վարձակալության պայմանագրով պետական-մասնավոր գործընկերության շրջանակում գոյություն ունի մեկ կառավարման մոդել:

Մանրածախ ծառայությունների մատուցումը լիցենզավորված անձի կողմից սպասարկման տարածքում գտնվող բաժանորդներին ծառայությունների մատուցումն է մանրածախ սակագներով: Մեծածախ ջրամատակարարումը լիցենզավորված անձի կողմից սպասարկման տարածքից դուրս խմելու ջրի վաճառքն է մեծածախ սակագնով և մեծածախ ջրահեռացումը լիցենզավորված անձի կողմից սպասարկման տարածքից դուրս ջրահեռացման ծառայության մատուցումն է մեծածախ սակագնով:

Որպես բազիսային սակագներ սահմանվում են ջրային համակարգը վարձակալության տրամադրելու համար անցկացված մրցույթի արդյունքում ձևավորված և լիցենզիայով ամրագրված սակագները: Բազիսային սակագները ենթարկվում են ճշգրտման՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալը, սղաճը և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունը:

Ջրամատակարարման ներկայիս միանվագ սակագինը սահմանված է 180 դրամ/1մ<sup>3</sup> (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ.-ի դեկտեմբերի 9-ի թիվ 398 որոշմամբ): ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ.-ի նոյեմբերի 22-ի թիվ 499 որոշմամբ սակագնային փոխարժեքը կազմել է 191.41 դրամ/1 մ<sup>3</sup>, իսկ ՀՀ կառավարության 2017թ.-ի նոյեմբերի 21-ի թիվ 1697-Ն որոշմամբ սուբսիդավորումը կազմել է 11.414 դրամ: Սուբսիդավորումը կիրառվում է նաև 2019 թվականի համար:

Սակագինը կիրառվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության սպասարկման տարածքում ընդգրկված բնակավայրերի բոլոր սպառողների համար, ներառյալ խոցելի և մեկուսացված խմբերի համար: Ներկա դրությամբ ՀՀ-ում օրենսդրությամբ սահմանված չեն խոցելի և մարզինալացված խմբերը:

Ընկերության սպասարկման տարածքից դուրս բնակավայրերի մասով լիարժեք տեղեկատվություն ջրի սակագնի վերաբերյալ չկա, քանի որ այս բնակավայրերում ընդհանուր խնդիր է անգամ ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության ապահովումը:

Վարձակալության մրցույթի արդյունքում ձևավորվել և սահմանվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման բազիսային սակագները՝ 15 տարվա համար:

2017-2023թթ. բազիսային սակագնի (ներառյալ ավելացված արժեքի հարկ) սցենարն աճում է 180.0 դրամից մինչև 212.4 դրամ, այնուհետև այն նվազում է սկսած 2024 թվականից՝ 202.4 դրամից մինչև 129.6 դրամ՝ մինչև պայմանագրի ավարտը՝ 2031 թվականը, իսկ բազիսային ծավալն ավելանում է 123.0 մլն խոր.մ-ից մինչև 174.0 մլն խոր.մ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագներ

h/h	Անվանումներ	ՀԾԿՀ 22.11.2017թ. N 499 որոշմամբ սահմանված սակագինը	ՀՀ կառավարության 21.12.2017թ. N 1697-Ն որոշման համաձայն տրամադրվող սուբսիդիայի չափը	Բաժանորդներից գանձվող սակագինը
1.	Ընդամենը բաժանորդներին մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագին, որից	191.414	11.414	180.00
1.1	խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման համար	162.702	9.702	153.00
2.	Խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագին	38.282		

Սակագինը սահմանվում է բոլոր սպառողների համար, բացառությամբ հատուկ խմբերի սպառողների, որոնց համար կան զեղչեր:

Վերոնշյալ հատուկ խմբերի համար զեղչված սակագները օգտագործվում են ոչ միայն ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության համար, այլև ընդհանուր կոմունալ ծառայությունների ծախսերը ծածկելու համար:

Սակագնի ազդեցությունը խոցելի և մարզինալացված խմբերի վրա՝ ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության տեսանկյունից ներառված չէ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ վերը նշված եվրոպական երկրներում սահմանված սակագներում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագինը ենթակա է ճշգրտման՝ վարձակալության պայմանագրին համապատասխան, որը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն,
- գնաճ,
- ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի փոփոխություն,
- նվազեցում՝ ջրամատակարարման համակարգի այլ նպատակներով օգտագործումից ստացված լրացուցիչ եկամուտների և ոռոգման համար խմելու ջրի մատակարարման շնորհիվ:

ՀՀ-ում անապահով սպառողների համար ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության նպատակով, «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2006թ-ի նոյեմբերի 27-ին) ջրային պաշարների և ջրային համակարգերի հեռանկարային զարգացման հիմնական փաստաթուղթն է, որով իրականացվում են ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված խնդիրները, մասնավորապես՝ ջրամատակարարման ոլորտի գերակա խնդիրներից է նաև անապահով սպառողներին ջրային ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովումը:

Օրենսդրական դաշտի մեծ մասը բաժին է ընկնում որպես սոցիալական աջակցություն՝ ելնելով ընդհանուր սպառողների սոցիալական վիճակից, սակայն չտարանջատելով ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիությունը խոցելի խմբերի համար:

### **Հավասարության խնդիրները խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտներում**

Հիմնականում, բոլոր իրավական փաստաթղթերը ներառում են խոցելի կամ մարզինալացված խմբերի ջրամատակարարման և ջրահեռացման հարցերի վերաբերյալ հոդվածներ / կետեր, սակայն առանձին խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է:

Չնայած անվտանգ խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության ընդհանուր առաջընթացին, այնուամենայնիվ, ինչպես

սոցիալական, այնպես էլ աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունները դեռևս շարունակում են գոյություն ունենալ Հայաստանում (քաղաքային բնակավայրերում անվտանգ կերպով կառավարվող խմելու ջրի ծառայությունների հասանելիության 98,9%-ը՝ գյուղական բնակավայրերում 97%-ի համեմատ, քաղաքային բնակավայրերում անվտանգ կերպով կառավարվող ջրահեռացման ծառայությունների 96,1% հասանելիություն, ներառյալ օձառով և ջրով լվանալու համար նախատեսված միջոցների օգտագործումը՝ գյուղական վայրերում ընդամենը 48,6%-ի դիմաց (Հայաստանի կայուն զարգացման նպատակների ցուցանիշներ<sup>13</sup>): Նման անհամամասնությունները խոչընդոտում են ջրամատակարարման և ջրահեռացման մարդու իրավունքի լիարժեք իրացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը դիտարկել է Երևանի և մարզերի 201 ուսումնական և նախադպրոցական հաստատություններ՝ 121 դպրոց և 80 մանկապարտեզ: Ջրամատակարարման պակաս հայտնաբերվել է 121 դպրոցից 16-ում՝ 1 դպրոցում (Սյունիքի մարզ) ջրամատակարարումը բացակայում է, մեկ այլ դպրոցում՝ երեք օրվա ընթացքում մեկ անգամ է մատակարարվում (Սյունիքի մարզ) և 14 դպրոցում՝ ըստ մատակարարման ժամանակացույցի: Կազմակերպությունների ներքին ջրահեռացման համակարգի ապահովումը սանիտարական կանոնների և նորմերի պարտադիր պահանջ է: Դիտարկված դպրոցներից վեցում չի եղել ջրահեռացման ներքին համակարգ, բոլոր 80 նախակրթարաններն ապահովված են եղել ջրամատակարարման ներքին ցանցով: Մինչդեռ ուսումնասիրված 80 հաստատությունից 45-ը (56%) ապահովված չեն եղել տաք ջրամատակարարմամբ: Ընդ որում, գյուղերի նախակրթարանների 62% դեպքերում տաք ջրամատակարարման պակաս կա<sup>14</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան զեկույցը մեծամասամբ վերաբերում է հոգեբուժական հաստատություններին և քրեակատարողական հիմնարկներին: Համաձայն զեկույցի՝ առողջության պահպանման տեսանկյունից խիստ կարևոր է հոգեբուժական կազմակերպություններում սանիտարահիգիենիկ բավարար պայմանների ապահովումը: Արմաշի առողջության կենտրոնի հիվանդասենյակներում տեղադրված են ջրի ծորակներ և լվացարաններ, սակայն այցի պահին հոսող ջուր չի եղել: Տնօրինության տեղեկացմամբ՝ Արմաշ համայնքի ջրամատակարարման խնդիրը տարիներ ի վեր մնում է չլուծված: Նման պայմաններում ջրանջատումների խնդիրը մեղմացնելու համար ղեկավարությունը ստիպված է եղել տեղադրել պլաստմասե բաքեր: Նմանատիպ խնդիրներ են արձանագրվել նաև «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում և Սևանի հոգեբուժական հիվանդանոցում: Սևանի հոգեբուժական հիվանդանոցում դեղորայքը խմելու համար նախատեսված է եղել տարայով ջուր, տեղադրված են եղել մեկանգամյա օգտագործման բաժակներ, որոնք եղել են ոչ բավարար քանակի և օգտագործվել բազմակի՝ չպահպանելով հիգիենայի կանոնները:

Համաձայն գեկույցի՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջին հարկում հսկիչի համար նախատեսված սանհանգույց առկա չէ, և այցի ընթացքում տրամադրած տեղեկությունների համաձայն՝ բնական կարիքները հոգալու համար վերջինս ստիպված է հերթապահ մասից կանչել այլ հսկիչի, ով կփոխարինի իրեն, և գնալ այլ մասնաշենքում տեղակայված սանհանգույց: Հսկիչը չունի նաև հոսող ջրին հասանելիություն, միջանցքում տեղադրված է լվացարան, իսկ լվացվելու համար օգտագործվում է չշահագործվող ջրատար խողովակին ամրացված պլաստմասսայե տարայով ջուրը:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քրեակատարողական հիմնարկի ժամանակավոր պահման որոշ խցերում խմելու ջրին հասանելիություն չի եղել՝ ծորակների բացակայության կամ անսարքության պատճառով: Ինչպես Գյումրու, այնպես էլ Մարալիկի քրեակատարողական հիմնարկի ժամանակավոր պահման որոշ խցերի սանհանգույցներն ամբողջական պատով առանձնացված չեն եղել բնակելի տարածքից, իսկ խցերը կահավորված են եղել 1,5-2 մ երկարությամբ նստարաններով:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից օգտվող բաժանորդների առանձնացված տվյալները (օրինակ՝ սեռը, խոցելի խմբերը և այլն) մատչելի չեն:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելիությունը ներառված է «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի՝ անհրաժեշտ է ապահովել ջրի մատչելիությունը բավարար քանակությամբ և ընդունելի որակով՝ բնակչության, հատկապես՝ խոցելի խմբերի հիմնական կարիքները բավարարելու համար:

Կանայք կենտրոնական դեր են կատարում ջրամատակարարման և կառավարման ոլորտում: Ջրի սակագնի բարձրացումը բացասական ազդեցություն է թողնում տնային տնտեսությունների բյուջեների վրա և բերում է ջրի ոչ հետևողական մատակարարման, վճարման ավելի պակաս պատրաստակամության, հագուստ և սնունդ գնելու հնարավորությունների նվազեցման, հիգիենայի և ջրի հետ կապված առողջական խնդիրների ավելացման:

### **Սոցիալական աջակցություն**

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2006թ-ի նոյեմբերի 27-ին) ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հեռանկարային զարգացման հիմնական փաստաթուղթն է, որով իրականացվում են ջրային օրենսգրքով սահմանված խնդիրները:

Ջրամատակարարման ոլորտի գերակա խնդիրներից է նաև անապահով սպառողներին ջրային ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովումը:

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ընդունված 2014թ-ի դեկտեմբերի 17-ին) կյանքի դժվարին իրավիճակը սահմանվում է որպես հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորությունների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:

Համաձայն օրենքի 18-րդ հոդվածի (Սոցիալական աջակցությունը և դրա իրավունքը) դրույթների, սոցիալական աջակցության իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր ոք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Սոցիալական աջակցության դրամական նպաստի բազային չափը 2018թ.-ին սահմանվել է 18,000 դրամ, գումարած դրան մինչև 18 տարեկան ընտանիքի անդամներին տրվող օրենքով սահմանված 5,500-7,000 դրամ հավելումները<sup>10</sup>:

Տարբեր ընտանիքներում այդ նպաստի միջին չափը տատանվում է 25,000 դրամից մինչև 35,000 դրամ: Ասել, թե այս գումարը բավարար է ընտանիքին աղքատությունից դուրս գալու համար, խիստ չափազանցություն կլինի: Աղքատ ընտանիքների հիմնական մասն այս գումարի միջոցով կարողանում է հոգալ իր կոմունալ ծախսերը: Շատերը հումորով նկատում են, որ գումարն այնքան քիչ է, որ այն ստանալուց հետո տուն չի հասնում, քանի որ մեկ պատուհանից ստանում են, մյուս պատուհանում անմիջապես մուծում են կոմունալ վճարները ու վերադառնում տուն: Այսինքն, ներկայումս գործող ընտանեկան նպաստի քաղաքականությունն առայժմ հին ձևաչափի մեջ է: Չնայած նոր օրենքով սահմանված ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցումը պաշտոնապես սկսվել է 2017թ.-ի հունվարի 1-ից, բայց ոլորտում վարվող իրական քաղաքականությունը դեռևս մնացել է նախկին վիճակում: Ներկայումս այն անցումային փուլում է, ինչը պետք է խոստովանել, որ դեռ անհրաժեշտ արդյունավետությունը չունի: Այսինքն, ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման վրա ազդող որևէ շոշափելի փոփոխություն ընտանեկան նպաստների քաղաքականության իրականացման ոլորտում նկատելի չէ:

<sup>10</sup> <http://www.osf.am/wp>



ՀՀ օրենքներում ընդհանուր առմամբ անդրադարձ են կատարված դրամական փոխհատուցումների մասով, որում ներառվում են նաև ընդհանուր կոմունալ ծախսերը:

- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով (ընդունված՝ 17.12.2014թ-ին) սահմանվում են սոցիալական ծառայությունների, սոցիալական աջակցության և ինտեգրված սոցիալական ծառայությունների հասկացությունները, հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական աջակցության իրավունքը, նպատակը, սոցիալական աջակցության կառավարման համակարգը, սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները, կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:
- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 12.12.2013թ-ին) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:
- «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 14.04.1993թ-ին) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:
- «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 25.05.1994թ-ին:

### **Վարձավճարի 50% զեղչից օգտվող բաժանորդներ**

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրում) ծառայությունների 50% զեղչի արտոնությունը կիրառվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված քաղաքացիների խմբերի համար, դրանք են՝ նախկին ԽՍՀՄ հերոսները, սոցիալիստական աշխատանքի հերոսները, Հայաստանի ազգային հերոսները, «Մարտական խաչ»-ի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով և Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվածները, անհատական կենսաթոշակառուները, ինչպես նաև հաշմանդամություն ստանալու իրավունք ունեցող զինծառայողները, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները (ամուսինը/կինը,

ծնողները, զինվորական կենսաթոշակ ստանալու իրավասություն ունեցող անդամները կերակրողին կորցնելու դեպքում): 50% զեղչի արտոնություն կիրառվում է միայն ջրահեռացման ծառայության համար, ինչպես նախատեսված է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ գլխով:

Հաշվետու ժամանակաշրջան	Սպառողի նկարագիրը	Սպառողների քանակը	Զեղչի գումար (ՀՀ դրամ)	Ջրի սպառումը (հազ. դրամ)	Գանձում (հազ. դրամ)	Հավաքագրում (հազ. դրամ)
2018 թ.-ի 1-ին կես	Կենցաղային սպառում ունեցող բաժանորդ	736 905	129	37 691	6 949 501	6 071 893
	ներառյալ					
	Զեղչի արտոնությունից օգտվող սպառողներ	64	129	3	422	350
2019թ.-ի 2-րդ կես	Կենցաղային սպառում ունեցող բաժանորդ	742 670	107	40 365	7 466 152	6 683 311
	ներառյալ					
	Զեղչի արտոնությունից օգտվող սպառողներ	54	107	2.3	317	285

Աղբյուրը՝ «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կիսամյակային հաշվետվություն, 2019 թվականի հունվար-հունիս

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ I դեցիլային խմբի համար դրամական եկամուտը 2015 թվականին կազմել է 10 299 դրամ: 1-ին քվինտիլում (ամենաաղքատ) տնային տնտեսությունների անվանական ծախսերը 2017թ.-ին կազմել են 16845 ՀՀ դրամ, իսկ ծառայությունների ծախսերը կազմել են նույն խմբի

համար 27,1% (Հայաստան. Տնային տնտեսությունների եկամուտներ, ծախսեր և հիմնական սննդի սպառում, 2018թ.):

Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով անվանական սպառողական ծախսերը քվինտիլ խմբերի և խոցելի խմբերի կողմից, ՀՀ դրամ

<b>Քվինտիլային խմբեր</b>	<b>2015թ.</b>	<b>2016թ.</b>	<b>2017թ.</b>	<b>2018թ.</b>
1-ին քվինտիլային	16 562	16 899	16 845	18 123
2-րդ քվինտիլային	25 507	26 077	25 602	27 301
3-րդ քվինտիլային	34 367	36 483	33 967	35 553
4-րդ քվինտիլային	46 051	49 233	45 979	46 001
5-րդ քվինտիլային	91 778	91 178	99 688	101 942
<b>Խոցելի խմբեր</b>				
Գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ	41 982	46 094	42 427	43 675
Բազմանդամ (6 և ավել) տնային տնտեսություններ	32 452	36 146	31 842	34 707
Կենսաթոշակառուներով տնային տնտեսություններ	41 947	41 726	42 498	43 910
Երեք և ավելի երեխաներ (0-14 տարեկան) ունեցող տնային տնտեսություններ	27 077	31 041	27 632	31 825
Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ	45 406	46 503	42 883	46 883
Հինգ տարեկան և ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ	34 944	37 077	34 790	36 068

Տվյալները հստակ ցույց են տալիս, որ ծառայությունները անտանելի են երկրի ամենաաղքատ տնային տնտեսությունների համար:

**Այլ երկրներում կիրառվող ջրի սակագների և սոցիալական քաղաքականության դեպքերի ուսումնասիրություն**

Առկա, հասանելի, մատչելի և անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հասանելիությունը մարդու իրավունքներից է:

Ներկա դրությամբ, ՀՀ-ում օրենսդրորեն սահմանված չեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության տեսանկյունից խոցելի և մեկուսացված խմբերը, որպեսզի հնարավոր լինի վերլուծել և գնահատել գործող սակագնի ազդեցությունն այդ խմբերի վրա:

Հետևաբար, փորձենք անդրադառնալ եվրոպական երկրներում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագներին՝ ընդհանրապես բոլոր սպառողների համար: Ուսումնասիրելով այդ երկրներում ջրամատակարարման ծառայությունների մատուցման փորձը, կարող ենք նշել, որ ջրամատակարարման ծառայություններն իրականացվում են կառավարման տարբեր մոդելներով, օրինակ՝ պետություն-մասնավոր գործընկերության, քաղաքապետարանների կամ մասնավոր սեկտորի միջոցով: Ծառայությունների մատուցման համար կիրառվում են տարբեր սակագներ:

Ստորև ներկայացված են եվրոպական երկրներն հետևյալ սկզբունքով. Դանիայում գործում է ամենաբարձր սակագինը, Հունաստանում՝ ամենացածր սակագինը և Չեխիայի Հանրապետությունում կիրառվում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման խառը կառավարման մոդելը (EurEau, Եվրոպայում ջրային ծառայությունների կառավարում):<sup>11</sup>

	<b>Դանիա</b>	<b>Հունաստան</b>	<b>Չեխիայի Հանրապետություն</b>
<b>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ</b>	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների գործունեությունն ուղղված է բաժանորդներին	Հունաստանի ազգային օրենսդրության համաձայն, «ջրային ծառայություններն» ընդգրկում են խմելու ջրի	Ջրային ծառայությունները ներառում են ջրի մաքրումը՝ խմելու ջրի որակի պարամետրերի բավարարման

<sup>11</sup> <http://www.eureau.org/resources/publications/150-report-on-the-governance-of-water-services-in-europe/file>

	<p>Խմելու ջրի մատակարարմանն ու կեղտաջրերի՝ ներառյալ հեղեղաջրերի հեռացմանը: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ընկերություններն առանձին իրավաբանական անձինք են և իրենց գործունեությունն իրականացնում են միմյանցից անկախ:</p>	<p>մատակարարումը և կեղտաջրերի հավաքումը և մաքրումը:</p>	<p>համար, սպառողներին խմելու ջրի մատակարարումը և կեղտաջրերի արտահոսքը հանրային կոյուղիներ, որին հաջորդում է հետագա մաքրումը, ընդունող ջրային մարմիններ կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքին հասնելը:</p>
<p><b>Ջրի սակագներ</b></p>	<p>Ջրի սակագները փոքր ջրամատակարար կազմակերպությունների համար (&lt;200,000 մ<sup>3</sup>/տարեկան). մատակարարն առաջարկում է սակագինը, իսկ ավագանին հաստատում է այն:</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող օպերատորների համար (առնվազն 200,000 մ<sup>3</sup> / տարեկան). օպերատորն առաջարկում է</p>		<p>Ջրի սակագները ներառված են կարգավորվող գներով ապրանքների ցանկում և կարգավորվում են «Գների մասին» օրենքով: Ջրի սակագները հաշվարկվում են ջրօգտագործողների կողմից: Ֆինանսների նախարարությունը հանդես է գալիս որպես կարգավորող մարմին, որը վերահսկում է ծախսային տարրերը և գները:</p> <p>Բացառությամբ ուղղակի մասնավոր</p>

	<p>սակագինը, իսկ ավագանին հաստատում է այն՝ հաշվի առնելով ազգային կարգավորողի պահանջները:</p>	<p>կառավարման, գոյություն ունի նաև պետական սեկտորի (համայնքապետարա ններ, քաղաքապետարանն երի ասոցիացիաներ և այլն) հիմնարար կարգավորիչ գործառույթ հիմնվելով գործառնական կոնցեսիոն պայմանագրերի վրա՝ մանրամասն սահմանելով գնագոյացման սխեմաները, ռիսկերի փոխանցումները և օպերատորի կողմից դրանց բավարարման արդյունավետության պարամետրերը:</p> <p>Որպես ենթակառուցվածքնե րի սեփականատերեր, նրանք հաստատում են տեղական ջրային ընկերության կողմից՝ մասնավոր կամ հանրային, ներկայացված յուրաքանչյուր սակագնային առաջարկը: Օրենքը թույլատրում է սուբյեկտներին գանձել ջրմուղ-</p>
--	--	--

			կոյուղու վարձավճարներն՝ այլ գործողություններից ջրմուղ-կոյուղու ծառայությունների գնի սուբսիդավորման համար (միջսեկտորալ խաչաձև սուբսիդիաներ):
<b>Կառավարման մոդելներ</b>	Կառավարման մոդելներ. մասնավոր կառավարում՝ շուրջ 2100 սպառողին պատկանող ջրային ծառայություններ մատուցող ընկերություններով, և պատվիրակված պետական կառավարում՝ շուրջ 140 հանրային սեփականություն հանդիսացող սահմանափակ ընկերություններով, որոնք պատասխանատու են ջրամատակարարման ծառայությունների համար, և շուրջ 110 հանրային սահմանափակ ընկերություններ,	Ջրային ծառայությունների կառավարման հիմնական մոդելը պետության կողմից պատվիրակված կառավարումն է, ինչպես, օրինակ, Հունաստանի խոշորագույն քաղաքներ Աթենքում և Սալոնիկում, որոնք ջրային ծառայություններ են մատուցում մոտավորապես 5 մլն մարդու (ընդհանուր բնակչությունը՝ 11 մլն (2011թ.)):  Հունական պետությունը երկու հանրային կազմակերպություն է պատվիրակել ջրային ծառայություններ	Չեխիայում գոյություն ունի կառավարման մի քանի մոդել:  1. Պատվիրակված մասնավոր կառավարում (շուկայի 59%-ը) ա. ուղղակի՝ հիմնվելով տեղական ինքնակառավարման և մասնավոր իրավաբանական անձանց միջև կնքված պայմանագրերի վրա  բ. անուղղակի՝ (i) տեղական ինքնակառավարման մարմինների ասոցիացիաների միջոցով, որոնք ակտիվները հանձնում են մասնավոր անձանց վարձակալության և

	<p>որոնք պատասխանատու են ջրահեռացման ծառայությունների համար</p>	<p>մատուցելու համար: Հունական պետությունը հիմնական բաժնետերն է: Երկու ընկերությունների տնօրենների խորհրդի նախագահը և գործադիր տնօրենը նշանակվում են Կառավարության կողմից:</p>	<p>(ii) հանրային սեփականություն հանդիսացող ընկերությունների միջոցով, որոնք ակտիվները հանձնում են մասնավոր անձանց վարձակալության 2. Պատվիրակված պետական կառավարում կամ ջրային տնտեսության ընկերությունների միջոցով կամ հանրային բազմաբնույթ ծառայություններ մատուցող ընկերության միջոցով (սովորաբար քաղաքային տեխնիկական ծառայություններ մատուցող ընկերություն)՝ շուկայի 25%-ը:</p> <p>3. Ուղղակի մասնավոր կառավարում (մասնավոր սեփականություն և հանրային ջրային համակարգերի շահագործում)՝ շուկայի 9%:</p> <p>4. Ուղղակի պետական</p>
--	---	---	---



			կառավարում՝ շուկայի 7%:
<b>Միջին գինը</b>	9.00 եվրո/մ <sup>3</sup> , բնակչությունը՝ 5, 717, 014	1.40 եվրո/մ <sup>3</sup> , բնակչությունը՝ 11,2 00,200	3.27 եվրո/մ <sup>3</sup> , բնակչությունը՝ 10,526,284

### Այլ երկրներում կիրառվող սոցիալական սակագների օրինակներ

Սոցիալական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնում է սոցիալական ապահովության և ապահովագրության խիստ հատուկ և նպատակային քաղաքականություն, որն ուղղված է երկրում աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանապատիվ ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խմբերի համար հնարավորությունների ընդլայնմանը և նրանց համար որոշակի սոցիալական երաշխիքների ապահովմանը և ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Սոցիալական սակագներն այս առավել խոցելի սպառողներին ծառայությունների դիմաց ավելի ցածր վարձավճարներ տրամադրելու միջոց են:

#### Պորտուգալիա

Պորտուգալիայի սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակում սոցիալական ապահովության ծառայությունները կարող են վճարել տնտեսական դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների կամ անհատների մատակարարված ջրի դիմաց առաջացած պարտքերը: Անհատները կամ ընտանիքները որոշակի տնտեսական անհրաժեշտության իրավիճակներում (մեկ շնչի հաշվով եկամտից ցածր սոցիալական կենսաթոշակ՝ տարեկան թարմացվող), իրավունք ունեն օգտվել նման արտոնություններից: Դրամական արտոնությունները կարող են տրամադրվել՝ (I) միանվագ վճարով՝ ժամանակավոր տնտեսական անհրաժեշտության դեպքում, և (II) ամսական նպաստներ՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով: Այս տեսակի դրամաշնորհների տրամադրումից առաջ սոցիալական ապահովության ծառայության կողմից տեխնիկական միջամտությունը պարտադիր է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման համար՝ սոցիալական ախտորոշման իրականացման և անհատի / ընտանիքի տնտեսական իրավիճակի ուսումնասիրության համար: Այս միջոցառումները ներառված չեն ոլորտի ազգային ռազմավարությունում (Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության հասնելու հարցում առաջընթացի գնահատում. Փորձական նախագիծ Պորտուգալիայում, 2013 թ.):

#### *Բուլղարիա*

Բուլղարիայում մեկ օպերատորի կողմից սպասարկվող տարածքների համար կա միասնական գին և սակագներ սահմանելու հնարավորություններ՝ ըստ ջրի մատակարարման ձևի, մասնավորապես՝ պոմպով, ձգողության ուժի ազդեցությամբ և խառը: Ջրահեռացման ծառայության մասով նույնպես ներդրվել է երեք սակագին՝ կախված կեղտաջրերի աղտոտվածության աստիճանից: Երկիրն ունի Տարգովիշտե քաղաքի օպերատորի կողմից սոցիալական սակագնի ներդրման փորձ՝ սպառումը ամսական մինչև 20 մ<sup>3</sup> և ավելի, քանի որ նորմով սահմանված սակագինը գերազանցել է Ազգային վիճակագրական ինստիտուտի տվյալների բազայում շրջանի բնակչության միջին եկամտի համար որոշված սոցիալական հանդուրժողականության չափը (Բուլղարիայում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակային վերլուծություն, 2018 թ.):

### *Հյուսիսային Մակեդոնիա*

Կոմունալ ծառայություններից օգտվելու համար, անհատական և կոլեկտիվ կոմունալ ծառայությունների դիմաց վճարվում է վարձավճար՝ ըստ «Մակեդոնիայի քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման մասին» օրենքի, որը կարգավորում է որոշակի կոմունալ ծառայությունների տրամադրումը: Հաշվարկի մեթոդաբանությունն իրականացնում և մշակում է տրանսպորտի և կապի նախարարությունը, իսկ վարձավճարը / սակագինը որոշում է ծառայություններ մատուցողը («Ջուր և ջրահեռացում» Ա/Չ)՝ տեղական իշխանությունների կամ Սկոպիե քաղաքի կողմից նախնական հաստատումից հետո: Սկոպիե քաղաքը և դրա «Ջրամատակարարում և ջրահեռացում» Ա/Չ կոմունալ ձեռնարկությունն իրականացնում է խոցելի և մարզինալացված խմբերի կարիքներին ուղղված քաղաքականություն: 2002թ.-ին «Ջրամատակարարում և ջրահեռացում» Ա/Չ կոմունալ ձեռնարկությունը Կանոնադրության և կառավարման խորհրդի նիստի շրջանակում ընդունել է որոշում՝ ֆինանսական օժանդակություն ստացող շահառուներին ջրօգտագործման դիմաց վճարումներից ազատելու մասին, որը հաստատվել է Քաղաքային խորհրդի կողմից (Ջրի և ջրահեռացման մարդու իրավունքի ձեռքբերում , 2016թ.):

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները նախկինում սուբսիդավորվում էին, բայց 2020 թվականից ի վեր սուբսիդիա չի տրամադրվելու (ՀԾԿՀ 2019 թվականի նոյեմբերի 20-ի N 429 Ն որոշում): Ջրային կոմիտեն ստորագրել է համաձայնագիր, ըստ որի՝ որոշակի գումար է հանվելու ջրի վարձավճարից: Օգուտը հաճախորդների համար է, իսկ սուբսիդավորումը տրամադրվում է պետական բյուջեից մեկ տարի ժամկետով:

## **Քաղաձ դասեր**

Հայաստանում ջրային պաշարների կառավարման, ջրամատակարարման, ջրահեռացման և առողջության հետ կապված հիմնախնդիրները բաշխվում են քաղաքականության տարբեր ոլորտների միջև և պահանջում են տարբեր մարմինների միջև սերտ համագործակցության իրականացում՝ ինչպես քաղաքականության, այնպես էլ կառավարման մակարդակներում:

Այնուամենայնիվ, Հայաստանում շահագրգիռ կողմերը լիովին տեղյակ չեն ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակին և չունեն բոլորի համար խմելու ջրի և ջրահեռացման հասանելիության հետ կապված մարտահրավերներին արձագանքելու բավարար կարողություններ:

Չնայած անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հասանելիության ոլորտում ընդհանուր առաջընթացին, Հայաստանում թե սոցիալական և թե աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունները դեռևս պահպանվում են: Նման անհավասարությունները խոչընդոտում են ջրի և ջրահեռացման նկատմամբ մարդու իրավունքի լիարժեք իրացմանը:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում լուրջ մարտահրավերներից է գոյություն ունեցող շուրջ 570 բնակավայրի խմելու ջրամատակարարման հարցի լուծումը, որոնք ապահովված չեն կենտրոնացված ջրամատակարարմամբ և ընդգրկված չեն ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքում: Աշխարհագրական դիրքով պայմանավորված հավասար հասանելիության խնդիրները բազմիցս քննարկվել են և գտնվում են ուշադրության կենտրոնում, սակայն խնդիրների լուծման ուղղությամբ գործողություններն իրականացվում են դանդաղ:

Ներկայումս անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում, որտեղ նախատեսվում է նաև ներառել խոցելի և մարզինալացված խմբերի սահմանումը և այդ խմբերի համար խմելու ջրի հավասար հասանելիության ապահովումը:

Նախ, անհրաժեշտ է հավաքագրել երկրում ընդհանուր առմամբ սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման վրա սակագների ազդեցության վերաբերյալ տվյալներ, այնուհետև տալ այդ ծառայությունների ազդեցության գնահատականը տոկոսային հարաբերությամբ՝ որոշակի խոցելի և մարզինալացված խմբերի համար՝ ելնելով Հայաստանում տեղեկատվության մատչելիությունից: Ներկայումս խոցելի և մեկուսացված խմբերի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ՝ ազդեցության գնահատում իրականացնելու համար:

## Առաջարկություններ

Յուրաքանչյուր ոք ունի ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության իրավունք և յուրաքանչյուր ոք պարտավոր է վճարել մատուցված ծառայությունների դիմաց: Պետության կողմից պետք է սահմանվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն սոցիալապես անապահով բնակչությանը օգտվել այդ ծառայություններից, իսկ բնակչության կողմից՝ ապահովել այդ ծառայությունների վճարումը:

Ջրի արժեքը և ջրի սակագինը, ջրի արտադրության և բաշխման ծախսերը՝ կախված տեղական պայմաններից, շատ տարբեր են: Ջրամատակարարման ծառայությունների մատուցման արժեքի վերլուծությունը պետք է կատարվի շատ ուշադիր՝ օգտագործելով հուսալի տեղական տվյալներ: Առաջարկվում է տարբերակել նախնական ներդրումային ծախսերը, ընթացիկ ծախսերը և ընդլայնման ծախսերը: Ջրի սակագինը պետք է արտացոլի ջրի ծախսերը՝ ընդգրկվածության հասնելու համար (բաժանորդների մեծամասնությունն ունի պատշաճ ջրային ծառայություններից օգտվելու հասանելիություն) և երաշխավորի ծառայության հուսալիությունը: Այնուամենայնիվ, ջրի սակագինը հավասար չէ ջրի ծախսերին, քանի որ այն հաշվի է առնում սուբսիդիաները, ինչպես նաև շահույթն ու կորուստները: Իսկապես, եթե մասնավոր հատվածի հմտությունները պետք է մոբիլիզացվեն ծառայությունների մատուցման բարելավման համար, ապա շահույթը պետք է ընդունվի որպես հավասարման մաս:

Ջրային ոլորտի սուբսիդավորումը հիմնականում իրականացվում է ծառայությունների կայուն կառավարման նպատակով, որոնք հիմնականում պետք է ուղղված լինեն բնակչության համար հասանելիության ապահովմանը՝ որպես մարդու հիմնարար իրավունքի իրացում: Աշխարհի բազմաթիվ մասերում կառավարությունները, զարգացման գործակալությունները և համայնքները ջանասիրաբար աշխատում են ֆինանսավորման հարցի շուրջ, և միայն քիչ երկրներ ունեն իրատեսական քաղաքականություններ, ռազմավարություններ կամ ծրագրեր՝ ծախսերի փոխհատուցման և կայուն ֆինանսավորման համար՝ ծառայությունների ընդգրկվածության ընդլայնման նպատակով, մասնավորապես՝ աղքատների համար:

Երկարաժամկետ սուբսիդիաների ապահովումը դժվար է, ընթացիկ ծախսերը պետք է ամբողջությամբ ապահովվեն սակագնային և, վերջապես, սուբսիդավորման մեխանիզմներով: Խաչաձև սուբսիդավորումը հզոր գործիք է՝ ցածր եկամուտներ ունեցող երկրների և գյուղական բնակավայրերի համար սպասարկման ընդգրկվածության ընդլայնման համար: «Անվճար ջուր աղքատների համար» հայեցակարգը հեռանկարային գաղափար է այն հարուստ երկրներում, որտեղ

աղքատության մակարդակը ցածր է: Տվյալ հայեցակարգը, սակայն, ավելի վիճելի է զարգացող աղքատ երկրների առումով, որտեղ ջրամատակարարման ծառայությունների ընդգրկվածության ցուցանիշը դեռ ցածր է: Աղքատ գյուղական համայնքները պատրաստ են վճարել ջրի դիմաց, և այդ վճարելու պատրաստակամությունը հաջողության առանցքային գործոն է արդյունավետ և կայուն գյուղական ջրամատակարարումը զարգացնելու համար:

Նախկին ջրային տնտեսության ոլորտի ընկերություններում կիրառվել են խաչաձև սուբսիդավորման մեխանիզմներ:

Ոլորտին ուղղակի սուբսիդիաներ տրամադրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

- Ո՞ր ծառայությունները պետք է սուբսիդավորվեն՝ ջրամատակարարումը, թե՞ ջրահեռացումը, սպառումը, թե՞ միացումը:
- Ո՞վ պետք է օգտվի սուբսիդավորումից և ինչպե՞ս պետք է որոշվի իրավասությունը:
- Որքա՞ն պետք է լինի սուբսիդիան և որքա՞ն ժամանակ այն պետք է տրամադրվի:

Տարբեր երկրներում սակագների կիրառման համար պատասխանատու են տարբեր գերատեսչություններ՝ քաղաքապետարաններ, մասնավոր ընկերություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն: ՀՀ-ում այն կարգավորվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, որը սահմանել է մեկ միասնական սակագին՝ անկախ սոցիալական պատկանելիությունից

Հաշվի առնելով վերոգրյալն, անհրաժեշտ է.

- սահմանել օրենսդրական փոփոխություններ՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելիության և հասանելիության տեսանկյունից,
- ներգրավել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովման գործընթացում,
- սահմանել խոցելի և մեկուսացված խմբերը,
- սահմանել սոցիալական սակագին՝ նշված խմբերի սպառողների համար, չստեղծելով խոչընդոտներ այլ սպառողների համար,
- պետության կողմից տրամադրել սուբսիդիաներ,
- ավելի մեծ թվով կանանց ներգրավել ջրային ոլորտում որոշումների կայացման գործում,
- սահմանել նորմ՝ ջրի նվազագույն բավարար քանակի համար և խոցելի և մարզինալացված խմբերին ջուրը տրամադրել անվճար: